ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2020թ. խմբագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 2. ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ 3

ԳԼՈՒԽ 3. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ 7

ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 10

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգի, այսուհետ՝ Կանոնակարգ, նպատակն է կանոնակարգել ՀՖՖ մրցավարների և տեսուչների կողմից, իրենց պարտականությունների կատարման ընթացքում, խաղի կանոնների, բարոյաէթիկական նորմերի և մրցումների կանոնակարգի խախտումների համար պատասխանատվության ենթակրկելու ընդհանուր սկզբունքները և պատասխանատվության չափերը:

Հոդված 2. Կանոնակարգի համաձայն կարգապահական պատասխանատվություն կիրառող մարմինը՝ ՀՖՖ Մրցավարական կոմիտեն է:

Հոդված 3. Սույն կանոնակարգի շրջանակներում ենթակա են կիրառման հետևյալ կարգապահական տույժերը.

- զգուշացում,
- նկատողություն,
- զրկում մրցավարությունից և/կամ տեսչությունից,
- ցածր խումբ փոխադրում
- որակազրկում

Հոդված 4. ՀՖՖ Մրցավարական կոմիտեն կարգապահական տույժեր կիրառելիս պետք է հաշվի առնի կատարված խախտման ծանրության աստիճանը, կատարման հանգամանքները, առաջացած հետևանքները, ինչպես նաև մրցավարի և տեսուչի կողմից նախկինում թույլ տրված խախտումները:

ԳԼՈՒԽ 2. ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

Մրցավարների կողմից՝

Հոդված 5. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու դեպքում.

- առաջին անգամ մրցավարությունից **զրկում** 6-ից 10 մրցափուլով բոլոր առաջնություններում (զրկման կեսը անցնելուց հետո թույլատրել սապասարկել մանկապատանեկան առաջնության խաղեր),
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 6. Նախախաղային խորհրդակցությանը չներկայանալու կամ ուշանալու դեպքում.

- առաջին անգամ մրցավարությունից **զրկում** 1 մրցափուլ,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 3 մրցափուլ,
- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 7. Խաղին ոչ պատշաճ արտաքինով կամ սպորտային համազգեստով ներկայանալու դեպքում.

- առաջին անգամ մրցավարությունից **զրկում** 1 մրցափուլ,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 3 մրցափուլ,
- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 8. Տեսուչի բացակայության պայմաններում նրա (տեսուչի), կանոնակարգով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում.

- առաջին անգամ մրցավարությունից **զրկում** 1 մրցափուլ,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 3 մրցափուլ,

- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 9. Խաղի արձանագրությունը ժամանակին ՀՖՖ չներկայացնելու դեպքում.

- առաջին անգամ հայտարարել նկատողություն,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** 1-ից 3 մրցափուլով,
- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 10. Արձանագրությունը ջնջումներով, անհասկանալի ձևակերպումներով ու սխալներով ՀՖՖ ներկայացնելու դեպքում.

- առաջին անգամ նկատողություն հայտարարում,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** 1-ից 3 մրցափուլով,
- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 11. Արձանագրությունում կեղծ տեղեկություն գրանցելու կամ եղածը թաքցնելու (չգրանցելու) համար.

- մրցավարությունից **զրկում** 1 տարի ժամկետով կամ որակազրկում 5 տարի ժամկետով:

Հոդված 12. Մրցավարի, օգնականի, 4-րդ պաշտոնյայի, «թույլ» (8.0-8.2) գնահատական ստանալու դեպքում.

- առաջին անգամ նկատողության հայտարարում,
- երկրորդ անգամ մրցավարությունից **զրկում** 1 մրցափուլ,
- երրորդ անգամ մրցավարությունից **զրկում**, որպես մրցավար (օգնական, 4-րդ պաշտոնյա ըստ այն պրոֆիլի, որում նա ստացել է այդ գնահատականը) տվյալ և ավելի բարձր պրոֆիլում 2 մրցափուլ (որից 1 մրցափուլ բոլոր առաջնություններում, մյուս մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ)
- չորրորդ անգամ մրցավարությունից **զրկում**, որպես մրցավար

(օգնական, 4-րդ պաշտոնյա ըստ այն պրոֆիլի, որում նա ստացել է այդ գնահատականը) տվյալ և ավելի բարձր պրոֆիլում 4 մրցափուլ (որից 2 մրցափուլ բոլոր առաջնություններում, մյուս 2 մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ) այնուհետև տեղափոխել ավելի ցածր խումբ:

Հոդված 13. Մրցավարի, օգնականի, 4-րդ պաշտոնյայի “անբավարար” (7.9-7.8) գնահատական ստանալու դեպքում մրցավարությունից **զրկում** տվյալ և ավելի բարձր խմբերում.

- առաջին անգամ 1-ից 3 մրցափուլ (որից 1 մրցափուլ բոլոր առաջնություններում, զրկման մյուս մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ),
- երկրորդ անգամ 2-ից 4 մրցափուլ (որից 2 մրցափուլ բոլոր առաջնություններում, զրկման մյուս մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ),
- երրորդ անգամ 5 մրցափուլով (որից 3 մրցափուլ բոլոր առաջնություններում, զրկման մյուս 2 մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ),
- չորրորդ անգամ 5 մրցափուլով բոլոր առաջնություններում՝ այնուհետև տեղափոխելով ավելի ցածր խումբ:

Հոդված 14. Մրցավարի, օգնականի, 4-րդ պաշտոնյայի “անբավարար” (7.7 և ցածր) գնահատական ստանալու դեպքում մրցավարությունից **զրկում** տվյալ և ավելի բարձր խմբերում.

- առաջին անգամ 2-ից 4 մրցափուլ (որից 2 մրցափուլ բոլոր առաջնություններում, զրկման մյուս մրցափուլերում թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ),
- երկրորդ անգամ 5 մրցափուլ (որից 3 մրցափուլ բոլոր առաջնություններում, զրկման մյուս 2 մրցափուլերում

թույլատրել սպասարկել ավելի ցածր մակարդակի առաջնություններ),

- երրորդ անգամ 5 մրցափուլից մինչև մրցաշրջանի ավարտը՝ այնուհետև տեղափոխելով ավելի ցածր խումբ:

Հոդված 15. Մրցավարի, օգնականի, 4-րդ պաշտոնյայի երկրորդ անգամ “անբավարար” գնահատական ստանալու դեպքում (որոնցից մեկը 7.9-7.8, մյուսը՝ 7.7 և ցածր) մրցավարությունից **զրկում** տվյալ և ավելի բարձր խմբերում.

- 3-ից 5 մրցափուլ:

Հոդված 16. Ֆիզիկական պատրաստվածության և տեսական քննությունները տրված երկրորդ հնարավորությունից հետո չհանձնելու դեպքում.

- Մրցավարությունից **զրկում** 6 ամսով

ԳԼՈՒԽ 3. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

Տեսուչների կողմից՝

Հոդված 17. Անհարգելի պատճառով նախախաղային խորհրդակցությունից ուշանալու կամ խորհրդակցությունն ուշ անցկացնելու դեպքում՝ տեսչությունից **զրկում**.

- առաջին անգամ մինչև 3 մրցափուլ,
- երկրորդ անգամ 3-ից մինչև 6 մրցափուլ,
- երրորդ անգամ մինչև առաջնության ավարտը:

Հոդված 18. Անհարգելի պատճառով նախախաղային խորհրդակցությանը չներկայանալու դեպքում՝ տեսչությունից **զրկում**.

- առաջին անգամ մինչև 5 մրցափուլ,
- երկրորդ անգամ 6 մրցափուլից մինչև առաջնության ավարտը:

Հոդված 19. Անհարգելի պատճառով տեսչությանը չներկայանալու դեպքում՝ տեսչությունից **զրկում**.

- առաջին անգամ 6-10 մրցափուլ,
- երկրորդ անգամ մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 20. Տեսչական զեկուցագրի ներկայացման ժամկետներն անհարգելի պատճառով խախտելու դեպքում.

- առաջին անգամ հայտարարել նկատողություն,
- երկրորդ անգամ տեսչությունից **զրկում** 1-ից 3 մրցափուլ,

- երրորդ անգամ տեսչությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 21. Մարզադաշտից սահմանված ժամկետից շուտ հեռանալու դեպքում՝ տեսչությունից **զրկում**.

- առաջին անգամ մինչև 4 մրցափուլ,
- երկրորդ անգամ մինչև առաջնության ավարտը կամ 1 տարով:

Հոդված 22. Մրցավարների, պաշտոնական անձանց վրա խաղի կանխորոշման նպատակով ներգործության դեպքում.

- Ցմահ որակազրկում:

Հոդված 23. Մրցավարների կամ տեսուչի վրա ներգործության փորձերը թաքցնելու, խեղաթյուրելու կամ մեղմացնելու դեպքում (անկախ նրանից թե երբ է տեղի ունեցել՝ նախորոք, խաղի ժամանակ, թե խաղից հետո).

- Որակազրկում 1 տարի ժամկետով:

Հոդված 24. Մասսայական լրատվամիջոցներին խաղի մրցավարության, առանձին դրվագների գնահատման և այլ տեղեկություններ հաղորդելու դեպքում.

- առաջին անգամ տեսչությունից **զրկում** մինչև 10 մրցափուլ
- երկրորդ անգամ տեսչությունից **զրկում** մինչև առաջնության ավարտը կամ 1 տարով:

Հոդված 25. Տեսչական զեկուցագրի անուշադիր, անփույթ լրացման դեպքում.

- առաջին անգամ նկատողության հայտարարում,
- երկրորդ անգամ տեսչությունից **զրկում** 1-ից 3 մրցափուլ,
- երրորդ անգամ տեսչությունից **զրկում** մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 26. Մրցավարների գնահատման վերաբերյալ սահմանված մեթոդական ցուցումների պահանջները չկատարելու դեպքում.

- առաջին անգամ նկատողության հայտարարում,
- երկրորդ անգամ տեսչությունից **զրկում** 1-ից 3 մրցափուլ,
- երրորդ անգամ տեսչությունից **զրկում** մինչև առաջնության ավարտը կամ մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 27. Մրցավարական խմբի անդամներին անհիմն սխալ գնահատելու դեպքում (հաստատված ՀՖՖ Մրցավարական կոմիտեի որոշմամբ, որի համար հիմք է ծառայել փորձադիտարկման հանձնաժողովի եզրակացությունը) տեսչությունից **զրկում**.

- առաջին անգամ մինչև 3 մրցափուլ,
- երկրորդ անգամ մինչև 5 մրցափուլ,
- երրորդ անգամ մինչև 1 տարի ժամկետով:

Հոդված 28. Տեսչական աշխատանքների ընթացքում վարքի համընդհանուր կանոնների խախտման, որևէ լրացուցիչ ծառայությունների կամ ուշադրության պահանջի դեպքում.

- **զրկում** մինչև առաջնության ավարտը կամ 1 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 29. Եթե մրցավարի և/կամ տեսուչի համար սահմանված պատժի ժամկետը չի վերջանում տվյալ մրցաշրջանում, ապա պատիժը շարունակվում է հաջորդ մրցաշրջանում:

Հոդված 30. Մրցավարական և/կամ տեսչական աշխատանքի հետ կապված բոլոր որոշումները գրանցվում են մրցավարի և/կամ տեսուչի անձնական քարտում:

Հոդված 31. Առաջնության ընթացքում 3 անգամ զրկված տեսուչը մեխանիկորեն զրկվում է տեսչության իրավունքից մինչև առաջնության ավարտը:

Հոդված 32. Տեսուչի զրկման ժամանակահատվածում նրա գործունեությունը դադարում է բոլոր խմբերում (բացի մանկապատանեկան և պատանեկան առաջնություններում):

Հոդված 33. ՀՖՖ Մրցավարական կոմիտեն իրավասու է նաև քննարկել սույն կանոնակարգում չնշված այլ խախտումներ և կիրառել պատժամիջոցներ իրավունքի, արդարության և ազնվության սկզբունքների հիման վրա:

Հոդված 34. ՀՖՖ Մրցավարական կոմիտեն իրավասու է մրցավարությունից և/կամ տեսչությունից զրկելու հետ կապված կարգապահական տույժեր նշանակելու դեպքում որոշում կայացնել նշանակված կարգապահական տույժը պայմանականորեն չկիրառելու մասին՝ որպես փորձաշրջան սահմանելով նշանակված տույժի ժամկետի առնվազն 1/2-ը: Նշանակված փորձաշրջանի ընթացքում նոր կարգապահական խախտում թույլ տալու դեպքում պայմանական չկիրառված մասը ենթակա է գումարման

կարգապահական նոր տույժին:

Հոդված 35. ՀՖՖ Մրցավարական կոմիտեի որոշումները կարող են վերանայվել ՀՖՖ Նախագահի կողմից:

Հոդված 36. Սույն կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 11 դեկտեմբերի 2020թ.-ին և ուժի մեջ է մտնում հաստատման պահից: